## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հոկտեմբերի 2021 թվականի N 2104

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Մ.ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8/18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՌՈՒԲԵՆ ԱՐԾՐՈՒՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուբեն Արծրունի Մարգարյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12102021-06-0007 վկայականը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Վանաձոր համայնքի ավագանու 2020թ նոյեմբերի 25-ի թիվ 114-Ն որոշման 12-րդ և 15-րդ կետերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Մ.Խորենացու փողոց թիվ 8/18 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 19.1քմ մակերեսով ավտոտնակը և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 19.17քմ մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով, 10 տարի ժամկետով, տրամադրել Ռուբեն Արծրունի Մարգարյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ռուբեն Մարգարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի՝ 1.0քմ-ի համար տարեկան 30 (երեսուն) ՀՀ դրամ վարձավճարով և հողամասի՝ 1.0քմ-ի համար ամսական 24 (քսանչորս) ՀՀ դրամ վարձավճարով վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 13
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2021 թվականի N 2105

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ 13/9-9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՌԱՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆԺԵԼԱ ԲՈՐԻՍԻ ՍԱՔԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անժելա Բորիսի Սաքանյանի 25.01.2021թ. թիվ 02/1029 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24082021-06-0008 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի գ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Շինարարների փողոց թիվ 13/9-9 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 17.29քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 15.67քմ) մառանը 58790 (հիսունութ հազար յոթ հարյուր իննսուն) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 21.60քմ մակերեսով հողամասը 41350 (քառասունմեկ հազար երեք հարյուր հիսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Անժելա Բորիսի Սաքանյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Անժելա Բորիսի Սաքանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել մառանի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հոկտեմբերի 2021 թվականի N 2106

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 16 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմենակ Թոռնիկի Օհանյանի լիազորված անձ Կամո Էդուարդի Մովսիսյանի դիմումը, 24.07.2021թ թիվ 65 ԱԱ 0996669 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 843-20210824-64-5335674), անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1747640 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 18.09.2021թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3200 (նոտարական ակտի կոդ: 843-20210918-84-5394646), 27.09.2021թ. տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-27092021-06-0131 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Ազատամարտիկների փողոց թիվ 16 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ազատամարտիկների փողոց, 16/2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 13
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հոկտեմբերի 2021 թվականի N 2108

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Զ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂ ԹԻՎ 14Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԱՅԻԿ ՍՈՒՐԵՆԻ ՄՔՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՊԱՀԵՍՏԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արայիկ Սուրենի Մքոյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1937348 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Զ. Անդրանիկի փող թիվ 14ա հասցեում գտնվող Արայիկ Սուրենի Մքոյանին սեփականության իրավունքով պատկանող պահեստին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Զորավար Անդրանիկի փողոց, 14/9 պահեստ։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 14
ք. Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հոկտեմբերի 2021 թվականի N 2109

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍՈՒՐԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԵՅՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտի համակարգող բաժնի կողմից 14.09.2021 թվականին տրված արձանագրության և զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Սուրեն Առաքելյան Սեյրանի ԱՁ-ի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի $169^{16}$-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտի համակարգող բաժնի կողմից 14.09.2021 թվականին տրված զեկուցագրի և արձանագրության համաձայն՝ Սուրեն Առաքելյան Սեյրանի ԱՁ-ի 2019 թվականին իրականացրել է առանց թույլտվության հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառք, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի $169^{16}$-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարք է:

2021 թվականի սեպտեմբերի 14-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով՝ Վանաձորի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի հիման վրա 2021 թվականի սեպտեմբերի 29-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ:

Սուրեն Առաքելյան Սեյրանի անհատ ձեռնարկատերը վարչական վարույթի լսումներին պատշաճ կերպով չի ծանուցվել (հետադարձ ծանուցման փոստային կտրոնը առկա չէ):

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության նպատակով՝ անհատ ձեռնարկատեր Սուրեն Առաքելյան Մերուժանի վերաբերյալ հարուցված վարչական վարույթը կասեցնել, մինչև դրա կասեցման հիմք դարձած հանգամանքների վերանալը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 14
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հոկտեմբերի 2021 թվականի N 2110

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8-1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, «ԱՎՏՈԳԵՆ-Մ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԱՎՏՈԳԵՆ-Մ» ՍՊԸ-ի տնօրեն Հովհաննես Վանիկի Ղազարյանի լիազորված անձ Լևոն Բաղիշի Քոչարյանի դիմումը, 08.10.2021թ. տրված թիվ 2 լիազորագիրը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2230623 վկայականը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց թիվ 8-1/1 հասցեում գտնվող, «ԱՎՏՈԳԵՆ-Մ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 1.95946հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Հ. Թումանյան փողոց, 8/1 մասնաշենք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 15
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.tori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2021 թվականի N 2111

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՓՈՂՈՑ ԹԻՎ 54 ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Գր. Լուսավորիչ փողոց, թիվ 54 շենքի հարևանությամբ գտնվող 0,00198հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ս. Լազյան փողոց, 45/11 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 15
ք Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2021 թվականի N 2112

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 66 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Վոլոդյայի Սաղաթելյանի դիմումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 04/02/2021թ. թիվ Կ-04022021-06-0071 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 21 հունվարի 2021 թվականի «Աշոտ Սաղաթելյանին հողամաս օտարելու մասին» թիվ 66 որոշումը՝ 26.01.2021 թվականի հողամասի առուվաճառքի (նոտարական ակտի կոդ: 843-20210126-2-4895992) թիվ 169 պայմանագիրը (աճուրդով) համարելով լուծված:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ կատարել Վանաձոր քաղաքի Տաշիրի խճուղի, թիվ 12/3 հասցեում գտնվող հողամասի վճարների վերահաշվարկ և վերջնահաշվարկ:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, տեղեկատվության և աշխատանքի բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը ուղարկել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2021 թվականի N 2113

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 27/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱԼԲԵՐՏ ՌԱՖԻԿԻ ԱԶԱՐՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալբերտ Ռաֆիկի Ազարյանի 12.05.2021թ. թիվ 6784 դիմումը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25092019-06-0049 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով, 35-րդ կետի գ) ենթակետով և 36-րդ կետով՝ *որոշում եմ.*

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 27/1 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 14.0քմ ընդհանուր մակերեսով տաղավարները, 24.9քմ մակերեսով ծածկը և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 45.0քմ մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել Ալբերտ Ռաֆիկի Ազարյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ալբերտ Ռաֆիկի Ազարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 14.0 քմ ընդհանուր արտաքին մակերեսով տաղավարների, 24.9 քմ մակերեսով ծածկի և դրանցով զբաղեցված 45.0 քմ մակերեսով հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման նոր պայմանագիր՝ տաղավարների յուրաքանչյուր 1.0քմ-ի համար վճարի չափը սահմանելով ամսական 800 (ութ հարյուր) դրամ, ծածկի յուրաքանչյուր 1.0 քմ-ի համար վճարի չափը սահմանելով ամսական 60 (վաթսուն) դրամ, տաղավարների զբաղեցրած հողամասի յուրաքանչյուր 1.0քմ-ի համար վճարի չափը սահմանելով ամսական 800 (ութ հարյուր) դրամ և 45.0 քմ մակերեսով հողամասի յուրաքանչյուր 1.0 քմ-ի համար վճարի չափը սահմանելով ամսական 8 (ութ) դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ [illegible]ՅԱՆ

2021թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

18 նոյեմբերի 2021 թվականի N 2114

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4/8Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Խաչիկ Շահազիզի Ենգոյանի դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1176412 վկայականը, Վանաձորի քաղաքապետի 30 սեպտեմբերի 2004 թվականի թիվ 923 որոշումը, 11 հոկտեմբերի 2004 թվականի հողատարածքի վարձակալության թիվ 413 պայմանագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման 46-րդ կետի դ) ենթակետով և ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տերյան փողոց թիվ 4/8ա հասցեում գտնվող 5.7քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարի չափը փոփոխել և վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2031թ. հոկտեմբերի 11-ը:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Խաչիկ Ենգոյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 5.7քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարի չափը փոփոխելու և վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ վարձավճարի չափը 1.0քմ մակերեսով հողամասի համար սահմանելով ամսական 24 (քսանչորս) դրամ:

3. Վանաձոր քաղաքի Տերյան փողոց թիվ 4/8ա հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Վ. Տերյան փողոց, թիվ 4/8 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ [illegible] ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2021 թվականի N 2115

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/2-7 ԵՎ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՉԵ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վաչե Արամայիսի Շահվերդյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22102020-06-0015 և թիվ 28042021-06-0042 վկայականները, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոց թիվ 2/2-7 և Վ. Համբարձումյան փողոց թիվ 2/2 հասցեներում գտնվող Վաչե Արամայիսի Շահվերդյանին սեփականության իրավունքով պատկանող 285.9քմ ընդհանուր մակերեսով հողամասերը և 231.79քմ մակերեսով շինությունները՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Վ. Համբարձումյան փողոց, թիվ 2/2 շինություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ... ԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

18 նոյեմբերի 2021 թվականի N 2116

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 7 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սվետլանա Գևորգի Ժամհարյանի 25.06.2021թ. թիվ 8995 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ՏԱՐՈՆ ՍԵՐՈԲՅԱՆ ՀԵՆՐԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ներսիսյան նրբանցք թիվ 7 շենքի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 25.9քմ արտաքին մակերեսով՝ (ներքին մակերեսը՝ 21.3քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 25.9քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Առոյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի

վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր քաղաքի Ներսիսյան նրբանցք թիվ 7 շենքի հյուսիսային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Հ. Ներսիսյան փողոց, 1-ին նրբանցք, 7/37 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՖՐԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2021 թվականի N 2117

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/3 ԵՎ ԹԻՎ 1/3-1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱՌՆԻԿ ԳՐԻՇԱՅԻ ՅՈԼՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գառնիկ Գրիշայի Յոլչյանի 12.05.2021թ. թիվ 6762 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31032017-06-0016 և թիվ 30122020-06-0055 վկայականները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշմամբ, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով և 18-րդ կետի բ) և դ) ենթակետերով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 1/3-1 հասցեում գտնվող 0.01381հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:
2. Փոխել Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 1/3-1 հասցեում գտնվող 5.66քմ ընդհանուր մակերեսով պարսպի գործառնական նշանակությունը բնակելիից՝ որպես հասարակական գործառնական նշանակության շինություն՝ պարիսպ:
3. Միավորել Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 1/3 և թիվ 1/3-1 հասցեներում գտնվող Գառնիկ Գրիշայի Յոլչյանին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր 0,06841հա մակերեսով հողամասերը և դրանց վրա գտնվող գույքը՝ համաձայն ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

4. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 1/3 և թիվ 1/3-1 հասցեներում Գառնիկ Գրիշայի Յոլյանի սեփականության իրավունքով պատկանող 0,06841հա մակերեսով հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված հասարակական գործառնական նշանակության 144.40քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 127.70քմ) ավտոտեխսպասարկման կայանը և թվով 8 ինքնակամ ձևափոխումները՝ համաձայն ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի և եզրակացության:

5. Գառնիկ Գրիշայի Յոլյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 144.40քմ ընդհանուր արտաքին մակերեսով հասարակական գործառնական նշանակության ավտոտեխսպասարկման կայանի համար 568650 (հինգ հարյուր վաթսունութ հազար վեց հարյուր հիսուն) դրամ և թվով 8 ինքնակամ ձևափոխումների համար 15760 (տասնհինգ հազար յոթ հարյուր վաթսուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

6. Սույն որոշման 3-րդ կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Նարեկացու փողոց, թիվ 1/3 ավտոտեխսպասարկման կայան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2021 թվականի N 2118

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 11/19-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐԿԱԴԻ ԼՅՈՎԱՅԻ ՓԵԼԵՇՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2518 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արկադի Լյովայի Փելեշյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29122020-06-0044 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 11/19-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 23.7քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 20.94քմ) ավտոտնակը 49770 (քառասունինը հազար յոթ հարյուր յոթանասուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 23.7քմ մակերեսով հողամասը 69680 (վաթսունինը հազար վեց հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արկադի Լյովայի Փելեշյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արկադի Փելեշյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 30 դեկտեմբերի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 11/19-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված ավտոտնակը և դրանով զբաղեցված հողամասը Արկադի Լյովայի Փելեշյանին օտարելու մասին» թիվ 2518 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2021 թվականի N 2119

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ ՓՈՂ ԹԻՎ 51/8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմինե Կարլենի Արզումանյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1869326 վկայականը, Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 24 մարտի 2011 թվականի թիվ 352 որոշումը, 03.05.2002թ. հողատարածքի վարձակալության թիվ 139 պայմանագիրը. 04.04.2011թ. թիվ 99 համաձայնագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 28.03.2013թ. թիվ 276-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Լուսավորիչի փող թիվ 51/8 հասցեում գտնվող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2031 թվականի սեպտեմբերի 29-ը:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արմինե Կարլենի Արզումանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 20.0քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ 20.0քմ մակերեսով հողամասի համար վճարի չափը ամսական սահմանելով 400 (չորս հարյուր) դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Տեսք 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2021 թվականի N 2120

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՁՈՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 29 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՄԻԿ ՎԱՂԻՆԱԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոմիկ Վաղինակի Մարտիրոսյանի (ծնված՝ 26.12.1949թ.) դիմումը, 16.02.1988թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 25.12.2017թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 4901 (նոտարական ակտի կոդ: 763-20171223-84-2077607) վկայագիրը, 04.08.2021թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-112/21 ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Ձորյան փողոց թիվ 29 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 379.2քմ մակերեսով հողամասը և դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում վտանգ: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 379.2քմ, որից 71.28քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր օգտագործման հողամաս երկու սեփականատերերի՝ Ռոմիկ Վաղինակի Մարտիրոսյանի և կից սեփականատիրոջ միջև, որը նույնպես պատկանում է Ռոմիկ Վաղինակի Մարտիրոսյանին: Ռոմիկ Վաղինակի Մարտիրոսյանի բաժնեմասը կազմում է 343.56քմ (379.2-71.28 :2): Անհատական բնակելի տունը կառուցվել է 1988-1992թթ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Ռոմիկ Վաղինակի Մարտիրոսյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ձորյան փողոց թիվ 29 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 343.56քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Վանաձոր քաղաքի Ձորյան փողոց թիվ 29 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Հ. Օրբելու փողոց, թիվ 29 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ...ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2021 թվականի N 2121

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 17Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Միքայելի Մկրտչյանի 06.07.2021թ. թիվ 9506 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1917316 վկայականը, 13.04.2021թ. տրված իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելիության իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու մասին թիվ 1604 նոտարական ակտը (նոտարական ակտի կոդ: 763-20210327-153-5011685), 13.04.2021թ. տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 1605 (նոտարական ակտի կոդ: 763-20210412-84-5038481) և թիվ 1607 (նոտարական ակտի կոդ: 763-20210412-84-5038501) վկայագրերը, 14.07.2021թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-92/21 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով և 13-րդ կետի ա) ենթակետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Ազատամարտիկների փողոց թիվ 17ա հասցեում գտնվող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր անվճար պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 7.29 ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի նշանակության շինությունները (2.32քմ արտաքին մակերեսով բնակելի տուն (ներքին մակերեսը՝ 2.12քմ) և 4.97քմ մակերեսով բաց պատշգամբ)՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Սամվել Միքայելի Մկրտչյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարները՝ 7.29 ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի նշանակության շինությունների համար 23380 (քսաներեք հազար երեք հարյուր ութսուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ազատամարտիկների փողոց, 17/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ս. ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2021 թվականի N 2122

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂ ԹԻՎ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՋԱՂԻԿ ԱՎԵՏԻՍԻ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ջաղիկ Ավետիսի Մելիքյանի դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1855139 վկայականը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Մաշտոցի փող թիվ 15 հասցեում գտնվող Ջաղիկ Ավետիսի Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Մ.Մաշտոցի փողոց, 15/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հոկտեմբերի 2021 թվականի N 2123

### ԱՐԹՈՒՐ ԺՈՐԺԻ ՕՀԱՆՅԱՆԻՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Օհանյանի դիմումը և ղեկավարվելով «Համայնքային ծառայության» մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով՝ ***որոշում եմ.***

1. Արթուր Ժորժի Օհանյանին 2021 թվականի հոկտեմբերի 29-ից ազատել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնից:

2. Ֆինանսական բաժնին՝ կատարել վերջնահաշվարկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 18
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2021 թվականի N 2124

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 6 ԴՊՐՈՑԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏԱՂԱՎԱՐԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՏԱՂԱՎԱՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սիրուն Հրաչիկի Հովհաննիսյանի 11.01.2021թ. թիվ 167 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի թիվ 6 դպրոցի հարավային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 5.74քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 5.08քմ) տաղավարի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 5.74քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Փոխել Վանաձոր քաղաքի թիվ 6 դպրոցի հարավային մասում գտնվող 0,000574հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված

տաղավարի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված տաղավարի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին տաղավարը և հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր քաղաքի թիվ 6 դպրոցի հարավային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Գ. Լուսավորչի փողոց, թիվ 45/3 տաղավար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 նոյեմբերի 2021 թվականի N 2125

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարտին Սարիբեկի Պետրոսյանի 07.07.2021թ. թիվ 9533 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Իսահակյան փողոց թիվ 2 շենքի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 46.78քմ մակերեսով կիսակառույցի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 46.7քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված կիսակառույցի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աթոյանին՝ սույն որոշման 1-ին

կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված  շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին կիսակառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր քաղաքի Իսահակյան փողոց թիվ 2 շենքի հյուսիսային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ա. Իսահակյան փողոց, 2/31 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2021 թվականի N 2126

### ԱՐՄԱՆ ՌՈԲԵՐՏԻ ԲԵՐՆԵՑՅԱՆԻՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արման Բեռնեցյանի դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 4-րդ մասով՝ *որոշում եմ.*

1. Արման Ռոբերտի Բեռնեցյանին 2021 թվականի հոկտեմբերի 18-ից ազատել Վանաձոր համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնից:

2. Ֆինանսական բաժնին՝ կատարել վերջնահաշվարկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 18
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2021 թվականի N 2127

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 49 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մերուժան Սերգեյի Ղազարյանի 13.07.2021թ. թիվ 9856 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 49 շենքի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 21.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 19.94քմ) մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 21.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մետաղական ավտոտնակը և հողամասը վարձակալելու վերաբերյալ:

5. Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 49 շենքի հյուսիսային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Վարդանանց փողոց, 49/9 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2021 թվականի N 2128

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ ՓՈՂ. ԹԻՎ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Կարենի Ասատրյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 989858 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վանաձոր քաղաքի Մարգարյան փող. թիվ 14 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած 0,01688հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները, որից 118.8քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր օգտագործման հողամաս Արմեն Կարենի Ասատրյանի և կից տնատիրության՝ Գրիշա Հայրապետի Ասատրյանի միջև: Արմեն Կարենի Ասատրյանին պատկանող հողամասի մակերեսը կազմում է 109.4քմ (168.8-118.8:2)՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Վանաձոր քաղաքի Մարգարյան փող. թիվ 14 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Հ. Մարգարյան փողոց, 14 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.fori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2021 թվականի N 2129

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Մ.ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԺԵՆՅԱ ՎԱԼՈԴԻԱՅԻ ԾՐԿԹՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ժենյա Վալոդիայի Ծրկթյանի դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1083830 վկայականը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Մ.Խորենացու փողոց թիվ 1գ հասցեում գտնվող Ժենյա Վալոդիայի Ծրկթյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Մ.Խորենացու փողոց, 1/59 տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2021 թվականի N 2130

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ՀԱԼԱԲՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 36/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԹԱՂԵՎՈՍՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարզպետունի Սերյոժայի Թադևոսյանի 22.07.2021թ. թիվ 10511 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08102021-06-0041 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով, 35-րդ կետի գ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Կ. Հալաբյան փողոց 36/6 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 1.77քմ մակերեսով պարիսպը և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 29.0քմ մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով, 10 տարի ժամկետով, տրամադրել Մարզպետունի Սերյոժայի Թադևոսյանի:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Մարզպետունի Սերյոժայի Թադևոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել՝ 1.0 քմ-ի պարիսպի համար տարեկան 100 (հարյուր) ՀՀ դրամ վարձավճարով և հողամասի՝ 1.0քմ-ի համար տարեկան 20 (քսան ) ՀՀ դրամ վարձավճարով վարձակալության պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2021 թվականի N 2131

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 16Ա ՇԵՆՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Ուսանողական փողոց թիվ 16ա շենքի արևելյան մասում գտնվող 0.00198հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ուսանողական փողոց, 16/13 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 19
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2021 թվականի N 2132

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արամ Մովսեսի Ղարագյոզյանի 30.01.2021թ. թիվ 1515 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 02.07.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-89/21 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ 18.02.2021թ. տրված թիվ US-18022021-06-0976 տեղեկանքը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով և ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղու հարավային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 26.93քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 20.03քմ) բնակելի տան 1-ին հարկի, 18.59քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 15.34քմ) բնակելի տան 2-րդ հարկի, 11.95քմ մակերեսով բաց պատշգամբի, 0.9քմ մակերեսով պարսպի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 146.4քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Փոխել Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղու հարավային մասում գտնվող 0.01185հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

3. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված շինությունների և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների ինքնակամ կառուցումը իրականացրած անձին շինությունները և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղու հարավային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Երևանյան խճուղի, 92/9 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2021 թվականի N 2133

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՄԻՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9 ՇԵՆՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Միշա Եղիշի Առաքելյանի 02.08.2021թ. թիվ 10976 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների քնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ամիրյան փողոց թիվ 9 շենքի արևելյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 22.68քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 18.98քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 166.7քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Առուշանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր քաղաքի Ամիրյան փողոց թիվ 9 շենքի արևելյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ա. Ամիրյան փողոց, 9/5 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2021 թվականի N 2134

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 39 ՇԵՆՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուդոլֆ Սարգսի Ամիրխանյանի 25.08.2021թ. թիվ 12257 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 39 շենքի արևմտյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 27.9քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 26.65քմ) մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 27.9քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5 օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Արովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մետաղական ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 39 շենքի արևմտյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, 39/8 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2021 թվականի N 2135

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Վ. ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ 4/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՌԱՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՌԱՖԻԿ ՍԱՄՎԵԼԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռաֆիկ Սամվելի Առաքելյանի 14.10.2021թ. թիվ 02/14593 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13102021-06-0055 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի գ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Վ. Տերյան փողոցի թիվ 4/4 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 6.85քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 5.46քմ) մառանը 43930 (քառասուներեք հազար ինը հարյուր երեսուն) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 6.85քմ մակերեսով հողամասը 110810 (հարյուր տասը հազար ութ հարյուր տասը) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ռաֆիկ Սամվելի Առաքելյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ռաֆիկ Սամվելի Առաքելյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել մառանի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 19
ք.Վանաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2021 թվականի N 2136

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ՔՇՀ-3 ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 23/4-2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՀԵՐ ՍԱՐԳՍԻ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մհեր Սարգսի Անդրեասյանի 25.05.2021թ. թիվ 02/7454 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17082021-06-0064 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի գ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս թիվ 23/4-2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 6.1քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 5.0քմ) ավտոտնակը 12020 (տասներկու հազար քսան) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 6.05քմ մակերեսով հողամասը 26880 (քսանվեց հազար ութ հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Մհեր Սարգսի Անդրեասյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Մհեր Անդրեասյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2021 թվականի N 2137

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5/5-3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՂԱՎԱՐԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՏԱՂԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արման Սերգոյի Ավետիսյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 01022016-06-0006 վկայականը, Վանաձոր համայնքի ղեկավարի 28.10.2016թ.-ի թիվ 1085-Ա որոշումը, 04.11.2016թ. համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին (մրցույթով) թիվ 222 պայմանագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 28.03.2013թ. թիվ 276-Ն որոշմամբ, Վանաձոր համայնքի ավագանու 23 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 175-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 5/5-3 հասցեում գտնվող 13.67քմ մակերեսով տաղավարի և դրանով զբաղեցված 15.0քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2026 թվականի հոկտեմբերի 28-ը և պետական գրանցում ստացած տաղավարի համար վճար սահմանել:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արման Սերգոյի Ավետիսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 13.67քմ մակերեսով տաղավարի և 15.0քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգելու և պետական գրանցում ստացած տաղավարի համար վճար սահմանելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ տաղավարի յուրաքանչյուր 1.0քմ-ի համար վճարի չափը սահմանելով ամսական 800 (ութ հարյուր) դրամ, ընդհանուր՝ 10936 (տասը հազար ինը հարյուր երեսունվեց) դրամ և հողամասի վճար սահմանելով ամսական 1.0քմ-ի համար 96 (իննսունվեց) դրամ, ընդհանուր՝1440 (հազար չորս հարյուր քառասուն) դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2021 թվականի N 2138

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂ ԹԻՎ 76Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, «ՍՏԵԼԼԱ-90» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՂԱՎԱՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ստելլա-90» ԱԿ-ի նախագահ Հայկ Սեյրանի Դունամալյանի լիազորված անձ Ավետիք Սերգեյի Ղարաքեշյանի դիմումը, անշարժ գույքի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 23.01.2021թ. թիվ 158 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 775-20210123-90-4893312), Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1904124 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Աղայան փող թիվ 76գ հասցեում գտնվող, «Ստելլա-90» ԱԿ-ին սեփականության իրավունքով պատկանող տաղավարի զբաղեցրած, Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 32.0քմ մակերեսով հողամասը, հողի կադաստրային արժեքով՝ 336450 (երեք հարյուր երեսունվեց հազար չորս հարյուր հիսուն) դրամով, նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով օտարել «Ստելլա-90» ԱԿ-ին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ «Ստելլա-90» ԱԿ-ի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 32.0 քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3. Վանաձոր քաղաքի Աղայան փող թիվ 76գ հասցեում գտնվող տաղավարին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Դ.Աղայան փողոց, 76/4 տաղավար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2021 թվականի N 2139

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 18 ՀՈՒՆԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1304 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 18 հունիսի 2021 թվականի թիվ 1304 որոշումը, Վանաձոր համայնքի անվան անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27082021-06-0023 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 18 հունիսի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Գ.Լուսավորչի փողոց թիվ 29-4/4 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված ծածկը և դրանով զբաղեցված հողամասը Դավիթ Ռուդիկի Թորոսյանին օտարելու մասին» թիվ 1304 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման նախաբանում «21052020-06-0023» թվերը փոխարինել «27082021-06-0023» թվերով:

2. Որոշման 1-ին կետում «84500 (ութսունչորս հազար հինգ հարյուր)» բառերը փոխարինել «169000 (հարյուր վաթսունինը հազար)» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2021 թվականի N 2140

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 23 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՁԵՄՖԻՐԱ ԱՎԵՏԻՔԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԵՐԵՔ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ձեմֆիրա Ավետիքի Գրիգորյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25012016-06-0012 վկայականը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագրերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց թիվ 23 հասցեում գտնվող, Ձեմֆիրա Ավետիքի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված թիվ 1, թիվ 2 և թիվ 3 հատակագծերի:

2. Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց թիվ 23 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա) 319.76քմ ընդհանուր մակերեսով շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Ս. Աբովյան փողոց, 23 բնակելի տուն (հատակագիծ թիվ 1):

բ) 327.62քմ ընդհանուր մակերեսով շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Ս. Աբովյան փողոց, 23/1 բնակելի տուն (հատակագիծ թիվ 2):

գ) 311.2քմ ընդհանուր մակերեսով շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Ս. Աբովյան փողոց, 23/2 բնակելի տուն (հատակագիծ թիվ 3):

3. 229.4քմ մակերեսով հողամասը, 87,41քմ ընդհանուր մակերեսով նկուղային հարկը, 98.88քմ ընդհանուր մակերեսով ձեղնահարկը և 21.92քմ մակերեսով ավտոտնակը թողնել ընդհանուր օգտագործման տակ Ս. Աբովյան փողոց, 23, 23/1 և 23/2 հասցեների միջև՝ հավասար բաժիններով: 2-րդ հարկի 51.38քմ մակերեսով բաց պատշգամբը, [illegible] մակերեսով աստիճանահարթակը թողնել ընդհանուր օգտագործման տակ Ս. Աբովյան փողոց, 23, 23/1 և 23/2 հասցեների միջև՝ հավասար բաժիններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2021 թվականի N 2141

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼԵՎՈՆ ԳԱԼՍՏՅԱՆ ՍԵՅՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից 25.09.2021 թվականին տրված արձանագրության և զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից 25.09.2021 թվականին տրված զեկուցագրի և արձանագրության համաձայն՝ Լևոն Գալստյան Սեյրանի ԱՁ-ի 2021 թվականին իրականացրել է առանց թույլտվության բացօթյա առևտուր:

2021 թվականի սեպտեմբերի 25-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով՝ Վանաձորի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի հիման վրա 2021 թվականի հոկտեմբերի 15-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ:

Լևոն Գալստյան Սեյրանի անհատ ձեռնարկատերը վարչական վարույթի լսումներին պատշաճ կերպով չի ծանուցվել (հետադարձ ծանուցման փոստային կտրոնը առկա չէ):

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-
ին մասի «բ» ենթակետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 53-րդ, 56-60-րդ հոդվածներով՝

## ՈՐՈՇԵՑԻ

1. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության նպատակով՝ անհատ ձեռնարկատեր Լևոն Գալստյան Մեյրանի վերաբերյալ հարուցված վարչական վարույթը կասեցնել, մինչև դրա կասեցման հիմք դարձած հանգամանքների վերանալը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 19
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

19 հոկտեմբերի 2021 թվականի N 2142

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/4-9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԽԱՆՈՒԹԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆԻ ՀՈՎԻԿԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անի Հովիկի Ավագյանի 26.01.2021թ. թիվ 1195 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28092021-06-0054 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով, 35-րդ կետի բ) և ճ) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Վ. Համբարձումյան փողոց թիվ 1/4-9 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 97.9քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 89.24քմ) խանութը 1497870 (մեկ միլիոն չորս հարյուր իննսունյոթ հազար ութ հարյուր յոթանասուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 97.98քմ մակերեսով հողամասը 187540 (հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Անի Հովիկի Ավագյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Անի Հովիկի Ավագյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել խանութի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2021 թվականի N 2143

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 40 ՇԵՆՔ, ԹԻՎ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՌԱԶՄԻԿ ԱՐԹՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռազմիկ Արթուրի Հովհաննիսյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 14052021-06-0010 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Փոխել Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 40 շենք, թիվ 10 հասցում գտնվող բնակարանի գործառնական նշանակությունը՝ բնակելիից՝ որպես հասարակական գործառնական նշանակությամբ շինություն՝ հասարակական սպասարկման օբյեկտ:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի բնակարանային տնտեսության և համատիրությունները համակարգող բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքը հանել բնակարանային ֆոնդից:

3. Բնակարանի գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2021 թվականի N 2144

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂ ԹԻՎ 1Ա/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԶՈՀՐԱԲ ՌՈՍՏՈՄԻ ՔԵՇԻՇՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Զոհրաբ Ռոստոմի Քեշիշյանի 05.08.2021թ. թիվ 11262 դիմումը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1932888 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Վանաձոր քաղաքի Հակոբյան փող թիվ 1ա/1 հասցեում գտնվող, Զոհրաբ Ռոստոմի Քեշիշյանին սեփականության իրավունքով պատկանող շինությունների զբաղեցրած, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 3267.0քմ մակերեսով հողամասը, հողի կադաստրային արժեքով՝ 14511370 (տասնչորս միլիոն հինգ հարյուր տասնմեկ հազար երեք հարյուր յոթանասուն) դրամով,նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Զոհրաբ Ռոստոմի Քեշիշյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Զոհրաբ Ռոստոմի Քեշիշյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 3267.0քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3. Վանաձոր քաղաքի Հակոբյան փող թիվ 1ա/1 հասցեում գտնվող Զոհրաբ Ռոստոմի Քեշիշյանին սեփականության իրավունքով պատկանող շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Հ. Հակոբյան փողոց, թիվ 1/5 տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ      ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2021 թվականի N 2145

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՉԱՔԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմինե Լյովայի Հովսեփյանի 29.01.2021թ. թիվ 02/1427 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները. ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Չաքարյան փողոց թիվ 4 շենքի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 37.7քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 34.84քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 37.7քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Չաքարյան փողոց թիվ 4 շենքի հյուսիսային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Հ. Չաքարյան փողոց, 4/3 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՀԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 19
ք. Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2021 թվականի N 2146

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 11 ՇԵՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արայիկ Արզումանի Գևորգյանի 06.07.2021թ. թիվ 9500 դիմումը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Շիրակացու փողոց թիվ 11 շենքի հարավային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 25.55քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 21.52քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 25.5քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Փոխել Վանաձոր քաղաքի Շիրակացու փողոց թիվ 11 շենքի հարավային մասում գտնվող 0.00255հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ արդյունաբերության,

ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր քաղաքի Շիրակացու փողոց թիվ 11 շենքի հարավային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ա.Շիրակացու փողոց, թիվ 13/12 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2021 թվականի N 2147

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂ ԹԻՎ 4Ա/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Սամվելի Սամվելյանի դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 06.10.2021թ. անշարժ գույքի առուվաճառքի թիվ 4772 պայմանագիրը (նոտարական ակտի կոդ: 594-20211006-205-5433871), անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1884770 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Շիրակացու փող թիվ 4ա/2 հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ա.Շիրակացու փողոց, 4/2 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2021 թվականի N 2146

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂ ԹԻՎ 4Ա/2-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Սամվելի Սամվելյանի դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 06.10.2021թ. անշարժ գույքի առուվաճառքի թիվ 4770 պայմանագիրը (նոտարական ակտի կոդ: 594-20211006-205-5433829), անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1932682 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Շիրակացու փող թիվ 4ա/2-1 հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ա.Շիրակացու փողոց, 4/3 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2021 թվականի N 2149

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 54/34 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՇՈՏ ՎԱԼՈԴՅԱՅԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 30 ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 955 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Վալոդյայի Ալեքսանյանի դիմումը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24052021-06-0019 և Աշոտ Վալոդյայի Ալեքսանյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21012019-06-0015 վկայականները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց 54/34 հասցեում գտնվող, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակված նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 20.0քմ մակերեսով հողամասը և 18.9քմ մակերեսով ավտոտնակը 10 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել Աշոտ Վալոդյայի Ալեքսանյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Աշոտ Ալեքսանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 18.9քմ մակերեսով ավտոտնակի և 20.0քմ մակերեսով հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագիր՝ ավտոտնակի յուրաքանչյուր 1.0քմ մակերեսի համար վճարի չափը սահմանելով ամսական 20 (քսան) դրամ և հողամասի յուրաքանչյուր 1.0քմ-ի համար վճարի չափը սահմանելով ամսական 24 (քսանչորս) դրամ:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 30 ապրիլի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց թիվ 54/34 հասցեում գտնվող ավտոտնակի և դրանով զբաղեցված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման նոր պայմանագիր կնքելու մասին» թիվ 955 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2021 թվականի N 2150

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՓԻՆԵ ՋԻՎԱՆԻ ՋԱՎԱԽՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արփինե Ջիվանի Ջավախյանի 10.05.2021թ. թիվ 02/6625 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1946111 վկայականը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 08.06.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-76/21 Ի եզրակացությունը, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի կողմից 13/07/2021թ. ներկայացված թիվ ՔՏՄ/09.2.4/8319-21 գրությունը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ և 17-րդ կետերով, 18-րդ կետի բ) ենթակետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց թիվ 3ա հասցեում գտնվող, Արփինե Ջիվանի Ջավախյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 39.4քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 35.3քմ) գրասենյակը:
2. Արփինե Ջիվանի Ջավախյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 39.4քմ արտաքին մակերեսով գրասենյակի համար 297200 (երկու հարյուր իննսունյոթ հազար երկու հարյուր) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Հ. Թումանյան փողոց, թիվ 3/2 գրասենյակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 19
ք.Վանաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

19 հոկտեմբերի 2021 թվականի N 2151

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3Ա ՀԱՍՑԵԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ, ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԳՐԱՍԵՆՅԱԿՆ ՈՒ ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արփինե Ջիվանի Ջավախյանի 30.01.2021թ. թիվ 1507 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 08.06.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-76/21 Ի եզրակացությունը, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի կողմից 13/07/2021թ. ներկայացված թիվ ՔՏՄ/09.2.4/8319-21 գրությունը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Թումանյան փողոցի թիվ 3ա հասցեի արևելյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 5.7քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 3.403քմ) գրասենյակի, 15.4քմ մակերեսով աստիճանահարթակի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 21.1քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Փոխել Վանաձոր քաղաքի Թումանյան փողոցի թիվ 3ա հասցեի արևելյան մասում գտնվող 0.0021հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

3. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված գրասենյակի, աստիճանահարթակի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Առովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված գրասենյակի և աստիճանահարթակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին գրասենյակը, աստիճանահարթակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր քաղաքի Թումանյան փողոցի թիվ 3ա հասցեի արևելյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Հ. Թումանյան փողոց, թիվ 3/1 գրասենյակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2021 թվականի N 2152

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 66 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՆՎԱՐԴ ԱՎԵՏԱՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նվարդ Սեյրանի Ավետիսյանի 08.10.2021թ. թիվ 14348 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1738450 վկայականը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 19.10.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-142/21 Ի եզրակացությունը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ և 17-րդ կետերով, 18-րդ կետի բ) ենթակետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով *որոշում եմ.*

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Կամոյի փողոց, թիվ 66 հասցեում գտնվող, Նվարդ Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 728.6քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 609.36քմ) հասարակական շինությունները:

2. Նվարդ Սեյրանի Ավետիսյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 728.6քմ ընդհանուր արտաքին մակերեսով շինությունների համար 2869230 (երկու միլիոն ութ հարյուր վաթսունինը հազար երկու հարյուր երեսուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Վանաձոր քաղաքի Կամոյի փողոց, թիվ 66 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Կամոյի փողոց, 66/1 շինություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 հոկտեմբերի 2021 թվականի N 2153**

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 16Ա ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Վազգենի Բաղդասարյանի 29.06.2021թ. թիվ 9192 դիմումը, անշարժ գույքին հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ռուսանողական փողոց թիվ 16ա շենքի հյուսիսարևմտյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 18.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 16.59քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 42.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Մ. Արովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր քաղաքի Ռուսանողական փողոց թիվ 16ա շենքի հյուսիսարևմտյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ռուսանողական փողոց, թիվ 16/9 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 20
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

20 հոկտեմբերի 2021 թվականի N 2154

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂՅՈՒՍԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 22 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՐՎԱՆԴ ՄԱՆՈՒԿԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երվանդ Մանուկի Շահբազյանի (ծնված՝ 06.01.1959թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 25.11.1986թ. տրված տեխնիկական անձնագիրը, 15.04.2021թ. տրված իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելիության իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու մասին թիվ 976 նոտարական ակտը (նոտարական ակտի կոդ՝ 843-20210211-84-4928657), «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 22.03.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-40/21 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Աղյուսագործների փողոց թիվ 22 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 146.0քմ և կից 18.1քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1958-1990թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 164.1քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Երվանդ Մանուկի Շահբազյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Աղյուսագործների փողոց թիվ 22 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 146.0քմ մակերեսով հողամասին կից 18.1 մակերեսով հողամասերի նկատմամբ:

2. Ճանաչել Երվանդ Մանուկի Շահբազյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Աղյուսագործների փողոց թիվ 22 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 164.1քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Աղյուսագործների փողոց 22/2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 20
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2021 թվականի N 2155

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՆՁՈՐՈՒՏ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 63 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼԵՎՈՆ ԳԱՐԵԳԻՆԻ ԱՂԱՄԱԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լևոն Գարեգինի Աղամալյանի (ծնված՝ 20.01.1952թ.) դիմումը, 01.04.1993թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ՏԱՐՈՆ ՍԵՐՈԲՅԱՆ ՀԵՆՐԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, հողամասի հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամաս 1-ին փողոց թիվ 63 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 603.0քմ և դրան կից 89.8քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սպվիճում: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1947-2010թթ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 692.8քմ:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Լևոն Գարեգինի Աղամալյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամաս 1-ին փողոց թիվ 63 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 603.0քմ մակերեսով հողամասին կից 89.8քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Լևոն Գարեգինի Աղամալյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամաս Խնձորուտ թաղամաս 1-ին փողոց թիվ 63 հասցեի 692.8քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ բացառությամբ 15.05.2001թ.-ից հետո ինքնակամ կառուցված 14.4քմ արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 6.8քմ արտաքին մակերեսով աստիճանահարթակի, 41.6քմ արտաքին մակերեսով մանսարդի, 7.4քմ արտաքին մակերեսով պատշգամբի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամաս 1-ին փողոց թիվ 63 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Խնձորուտ թաղամասի 1-ին փողոց, 63 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 20
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2021 թվականի N 2157

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3 ՇԵՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՂԱՎԱՐԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսաննա Ալեքսանի Այվազյանի 19.06.2020թ. թիվ 2991 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի գրությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 06.11.2019թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-195/19 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոցի թիվ 3 շենքի հարավային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 6.18քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 5.46 ) տաղավարի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 28.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Փոխել Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոցի թիվ 3 հասցեի հարավային մասում գտնվող տաղավարի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.00286հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի

Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված տաղավարի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին տաղավարը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոցի թիվ 3 հասցեի հարավային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Վ. Համբարձումյան փողոց, 3/14 տաղավար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՄԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 20
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

20 հոկտեմբերի 2021 թվականի N 2158

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԱԼԱԲՅԱՆ (ՆԱԽԿԻՆ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ) ՓՈՂՈՑԻ 1-Ի ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 16 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՐՏԻԿ ՊԱՎԼԵՅԻ ԴԱՎԹՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարտիկ Պավլեյի Դավթյանի (ծնված՝ 01.03.1951թ.) լիազորված անձ Լիզա Արտավազդի Մուրադյանի (ծնված՝ 10.09.1950թ.) դիմումը, 16.03.2021թ. թիվ 664 (նոտարական ակտի կոդ: 741-20210316-90-4987260) լիազորագիրը, 12.07.2021թ. իրավունք սահմանող փաստաթուղթը Մարտիկ Պավլեյի Դավթյանին պատկանելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու մասին թիվ 2026 (նոտարական ակտի կոդ: 741-20210613-216-5166240) նոտարական ակտը, անհատական բնակելի տան 11.10.1993թ. և 10.03.1994թ տրված սեփականության վկայագրերը, ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ ԱՁ-ի կողմից տրված, հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Հալաբյան (նախկին Կուրղինյան) փողոցի 1-ի նրբանցք թիվ 16 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 356.0քմ և կից 104.0քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1957-1996թ.թ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 460.0քմ (356.0+104.0), որը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ հավասար բաժիններով, պատկանում է Մարտիկ Պավլեյի Դավթյանին և Պարգև Պավլեի Դավթյանին: Մարտիկ Պավլեյի Դավթյանի բաժնեմասը կազմում է 230.0քմ (460.0:2, 356.0:2+104.0:2):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Մարտիկ Պավլեյի Դավթյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Հալաբյան (նախկին Կուրղինյան) փողոցի 1-ի նրբանցք թիվ 16 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 356.0քմ մակերեսով հողամասին կից 104.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

460.0քմ (356.0+104.0) մակերեսով հողամասը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ հավասար բաժիններով, պատկանում է Մարտիկ Պավլեի Դավթյանին և Պարգև Պավլեի Դավթյանին: Մարտիկ Պավլեի Դավթյանի բաժնեմասը կազմում է 230.0քմ (460.0:2, 356.0:2+104.0:2):

2. Ճանաչել Մարտիկ Պավլեի Դավթյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Հալաբյան (նախկին Կուրղինյան) փողոցի 1-ի նրբանցք թիվ 16 հասցեի 230.0քմ (460.0:2, 356.0:2+104.0:2) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Վանաձոր քաղաքի Հալաբյան (նախկին Կուրղինյան) փողոցի 1-ի նրբանցք թիվ 16 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Կ. Հալաբյան փողոց, 1-ին նրբանցք, 16/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՎԱՌՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 20
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2021 թվականի N 2159

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԱԼԱԲՅԱՆ (ՆԱԽԿԻՆ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ) ՓՈՂՈՑԻ 1-Ի ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 16 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՐԳԵՎ ՊԱՎԼԵԻ ԴԱՎԹՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Պարգև Պավլեի Դավթյանի (ծնված՝ 21.02.1953թ.) դիմումը, 11.10.1993թ. և 10.03.1994թ. տրված անհատական բնակելի տան սեփականության վկայագրերը, ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Հալաբյան (նախկին Կուրղինյան) փողոցի 1-ի նրբանցք թիվ 16 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 356.0քմ և կից 104.0քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1957-1996թ.թ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 460.0քմ (356.0+104.0), որը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ հավասար բաժիններով, պատկանում է Պարգև Պավլեի Դավթյանին և Մարտիկ Պավլեի Դավթյանին: Պարգև Պավլեի Դավթյանի բաժնեմասը կազմում է 230.0քմ (460.0:2, 356.0:2+104.0:2): Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Պարգև Պավլեի Դավթյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Հալաբյան (նախկին Կուրղինյան) փողոցի 1-ի նրբանցք թիվ 16 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 356.0քմ մակերեսով հողամասին կից 104.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
460.0քմ (356.0+104.0) մակերեսով հողամասը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ հավասար բաժիններով, պատկանում է Պարգև Պավլեի Դավթյանին և Մարտիկ Պավլեի Դավթյանին: Պարգև Պավլեի Դավթյանի բաժնեմասը կազմում է 230.0քմ (460.0:2, 356.0:2+104.0:2):
2. Ճանաչել Պարգև Պավլեի Դավթյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Հալաբյան (նախկին Կուրղինյան) փողոցի 1-ի նրբանցք թիվ 16 հասցեի 230.0քմ (460.0:2, 356.0:2+104.0:2) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Վանաձոր քաղաքի Հալաբյան (նախկին Կուրղինյան) փողոցի 1-ի նրբանցք թիվ 16 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Հալաբյան փողոց, 1-ին նրբանցք, 16/2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 20
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2021 թվականի N 2160

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 3-6-3 ՇԵՆՔԻ ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՌԱՆԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՄԱՌԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անյուտա Վազգենի Սարգսյանի 06.07.2021թ. թիվ 9505 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 36-3 շենքի մոտ գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 28.98քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 26.09քմ) մառանի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 113.31քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մառանի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված մառանի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մառանը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր քաղաքի Գր. Լուսավորչի փողոց, թիվ 3-6-3 շենքի մոտ գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Մոսկովյան փողոց, 1/6 մառան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 20
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 նոյեմբերի 2021 թվականի N 2161

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԿԱՆԱԿԱ ԹԻՎ 39Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏՅՈՄ ԱԶԱՏԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտյոմ Ազատի Հակոբյանի դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1914966 վկայականը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Տարոն-4 Կանակա թիվ 39ա հասցեում գտնվող Արտյոմ Ազատի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող կիսակառույցին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տարոն-4 Մեքենաշինարարների թաղամաս, 39/1 կիսակառույց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 20
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2021 թվականի N 2162

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 39 ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԻ, ՀԱՐԹԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեյրան Լյովայի Հովակիմյանի 01.06.2021թ. թիվ 7724 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 30.07.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-108/21 Ի եզրակացությունը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2005թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 39 շենքի բակում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 98.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 85.49քմ) ավտոտնակի, 99.22քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 88.97քմ) ավտոտնակի, 8.88քմ մակերեսով հարթակի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 108.1քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցները:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակների, հարթակի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակների, հարթակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակները, հարթակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 39 շենքի բակում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Գ.Նարեկացու փողոց, 39/52 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 20
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2021 թվականի N 2163

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Տ. ՉՈՒԽԱՋՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 12/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԼԵՏ ԱԼԲԵՐՏԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Համլետ Ալբերտի Ղազարյանի 11.08.2021թ. թիվ 11580 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08102021-06-0028 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տ. Չուխաջյան փողոց, թիվ 12/3 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 54.3քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 48.32քմ) ավտոտնակը 106920 (հարյուր վեց հազար ինը հարյուր քսան) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 54.32քմ մակերեսով հողամասը 241190 (երկու հարյուր քառասունմեկ հազար հարյուր իննսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Համլետ Ալբերտի Ղազարյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Համլետ Ալբերտի Ղազարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 20
ք. Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հոկտեմբերի 2021 թվականի N 2164

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 32 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 2021 թվականի հունվարի 15-ի «Վանաձոր համայնքի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 32 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 21
ք. Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2021 թվականի N 2165

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 23 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1767 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 23 օգոստոսի 2021 թվականի թիվ 1767 որոշումը, Վանաձոր համայնքի անվան անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02082021-06-0043 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 23 օգոստոսի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 42-46/4 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասը Արսեն Սամվելի Մացակյանին կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» թիվ 1767 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման վերնագրում և 1-ին կետում «42-46/4» թվերը փոխարինել «42-14/9» թվերով:

2. Որոշման նախաբանում և 1-ին կետում «13052021-06-0028» թվերը փոխարինել «02082021-06-0043» թվերով:

3. Որոշման 1-ին և 2-րդ կետերում «19.9» թիվը փոխարինել «18,87» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՀԵ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 21
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2021 թվականի N 2166

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 114-2 ԵՎ ԹԻՎ 114/1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ՎԱՆՇԻՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՎԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Արթուրի Բաղրամյանի դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01092021-06-0034 և թիվ 08102021-06-0008 վկայականները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, հողամասի միավորման սխեման, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով ՀՀ կառավարության 25 փետրվարի 2021թ. թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց 114/1 հասցեում գտնվող 0.022867հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Միավորել Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց 114-2 և 114/1 հասցեներում գտնվող «ՎԱՆՇԻՆ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.044517հա ընդհանուր մակերեսով հողամասերը և 360.5քմ ընդհանուր մակերեսով կիսակառույցները՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Վարդանանց փողոց, թիվ 114/1 կիսակառույց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 21
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2021 թվականի N 2167

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՉՈՒԽԱՋՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 34/2-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՄԱՐԻՆԵ ՎԱՀԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ, ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարինե Վահանի Սահակյանի լիազորված անձ Սերյան Ռազմիկի Փոզարարյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12082021-06-0049 վկայականը, 10.08.2020թ. թիվ 1494 (նոտարական ակտի կոդ՝ 843-20200810-90-4660267) լիազորագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 08.10.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-134/21 Ի եզրակացությունը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 8.1-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի բ) ենթակետով և 18-րդ կետի դ) ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Չուխաջյան փողոց, թիվ 34/2-1 հասցեում գտնվող, Մարինե Վահանի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 8.0քմ արտաքին մակերեսով (ներքին՝ 7.20քմ) ավտոտնակը, 94.7քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին՝ 80.5քմ) բնակելի տունը և թվով 13 ինքնակամ ձևափոխումները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Մարինե Վահանի Սահակյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարները՝ 8.0քմ արտաքին մակերեսով ավտոտնակի համար 15760 (տասնհինգ հազար յոթ հարյուր վաթսուն) դրամ, 94.7քմ ընդհանուր արտաքին բնակելի տան համար 186470 (հարյուր ութսունվեց հազար չորս հարյուր յոթանասուն) դրամ և թվով 13 ձևափոխումների համար 25600 (քսանհինգ հազար վեց հարյուր) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 21
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2021 թվականի N 2168

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Տարոնի անձնագրային բաժանմունքի պետի 19.10.2021 թվականի թիվ 8/13-2035 գրությունը և ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Վանաձոր քաղաքի Բազումի անձնագրային բաժանմունքի պետի 20.10.2021 թվականի թիվ 8/59-2778 գրությունը, ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ *որոշում եմ.*

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածքում 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով հերթական ընտրությունների անցկացման համար ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածքում տեղամասային կենտրոններ.

| | Կենտրոն | Հասցե | Նկարագիր |
|---|---|---|---|
| 1) | թիվ 11 մանկապարտեզի շենքը | ք.Վանաձոր, Չոխաջյան փ., շենք 18ա | 62 քմ, խուլ պատ, թեքահարթակ չկա 2-րդ հարկ |
| 2) | թիվ 18 դպրոցի շենքը | ք.Վանաձոր Երևանյան խճ. շենք 155 | 55 քմ, խուլ պատ, թեքահարթակ չկա |
| 3) | թիվ 19 դպրոցի շենքը | ք.Վանաձոր, Չոխաջյան փ. շենք 24-1 | 35 քմ, խուլ պատ, թեքահարթակ չկա |
| 4) | թիվ 19 դպրոցի շենքը | ք.Վանաձոր, Չոխաջյան փ. շենք 24-1 | 35 քմ, խուլ պատ, թեքահարթակ չկա |
| 5) | թիվ 10 մանկապարտեզի շենքը | ք.Վանաձոր, Չոխաջյան փ. շենք 12ա | 65 քմ, խուլ պատ, թեքահարթակ |
| 6) | տաղավար | ք.Վանաձոր, Երևանյան խճ. շենք 64 | |
| 7) | թիվ 24 դպրոցի շենքը | ք.Վանաձոր, Ներսիսյան փ. շենք 6 | 100 քմ, խուլ պատ, թեքահարթակ 18 |
| 8) | թիվ 24 դպրոցի շենքը | ք.Վանաձոր, Ներսիսյան փ. շենք 6 | 100 քմ, խուլ պատ, թեքահարթակ |

| | | | |
|---|---|---|---|
| 9) | Մ.Մատինյանի անվան թիվ 19 մանկապարտեզի շենքը | ք.Վանաձոր, Սոխումի փ. շենք 5). | 94 քմ, խուլ պատ չկա, թեքահարթակ |
| 10) | ՄՄՄՊ մարզադպրոցի շենքը | ք.Վանաձոր, Սոխումի փ. շենք 5). | 73 քմ , խուլ պատ չկա, թեքահարթակ չկա |
| 11) | թիվ 25 դպրոցի շենքը | ք.Վանաձոր, Վ. Համբարձումյան փ. շենք 2 | 50 քմ, խուլ պատ, թեքահարթակ |
| 12) | Տաղավար | ք.Վանաձոր, Ռուսթամի փ. 2ա | 20 քմ , խուլ պատ |
| 13) | թիվ 25 դպրոցի շենքը | ք.Վանաձոր, Վ.Համբարձումյան փ.շենք 2 | 75 քմ, խուլ պատ, թեքահարթակ |
| 14) | թիվ 30 մանկապարտեզի շենքը | ք.Վանաձոր, Ուսանողական փ.շենք 91 | 85 քմ, խուլ պատ, թեքահարթակ չկա |
| 15) | թիվ 13 դպրոցի շենքը | ք.Վանաձոր, Ուսանողական փ. շենք 7 | 154 քմ, խուլ պատ, թեքահարթակ չկա |
| 16) | թիվ 23 դպրոցի շենքը | ք.Վանաձոր, Իսահակյան փ. 1 նրբ. շենք 3-1 | 150 քմ, խուլ պատ |
| 17) | Տ. Չուխաջյանի անվան արվեստի դպրոցի շենքը | ք.Վանաձոր, Աղայան փ. շենք 86ա | 47 քմ, խուլ պատ, թեքահարթակ չկա |
| 18) | թիվ 15 դպրոցի շենքը | ք.Վանաձոր, Աղայան փ. շենք 69 | 46 քմ, խուլ պատ, թեքահարթակ |
| 19) | թիվ 15 դպրոցի շենքը | ք.Վանաձոր, Աղայան փ. շենք 69 | 39 քմ, խուլ պատ, թեքահարթակ |
| 20) | ՕՀՄՄ դահլիճ | ք.Վանաձոր, Աղայան փ. շենք 72/1 | 90քմ, խուլ պատ, |
| 21) | նախկին թաղապետարանի շենքը | ք.Վանաձոր, Լեոյի փ. շենք 46 | 30քմ,խուլ պատ, |
| 22) | թիվ 31 մանկապարտեզի շենքը | ք.Վանաձոր, Ներսիսյան թաղ. շենք 6 | 60քմ,խուլ պատ, |
| 23) | թիվ 5 մանկապարտեզի շենքը | ք.Վանաձոր, Մաշտոցի փ. շենք 17 | 61 քմ, խուլ պատ, թեքահարթակ |
| 24) | թիվ 8 դպրոցի շենքը | ք.Վանաձոր, Մաշտոցի փ. շենք 1 | 80 քմ , խուլ պատ չկա, թեքահարթակ չկա |
| 25) | թիվ 10 դպրոցի շենքը | ք.Վանաձոր, Աղայան փ. շենք 59 | 85 քմ , խուլ պատ, թեքահարթակ |
| 26) | թիվ 21 դպրոցի շենքը | ք.Վանաձոր, Նիզամիի փ. շենք 49 | 46 քմ, խուլ պատ, թեքահարթակ չկա 2-րդ հարկ |
| 27) | թիվ 9 դպրոցի շենքը | ք.Վանաձոր, Զոր.Անդրանիկի փ. շենք 71 | 60 քմ , խուլ պատ չկա, թեքահարթակ չկա |
| 28) | Գուսան Զաքարյանի անվան մշակույթի տան շենքը | ք.Վանաձոր, Զոր.Անդրանիկի փ. շենք 38 | 70 քմ, խուլ պատ չկա, թեքահարթակ |
| 29) | Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղի շենքը | ք.Վանաձոր, Աբովյանի փ. շենք 64 | 60 քմ , խուլ պատ չկա, թեքահարթակ չկա |

| | | | |
|---|---|---|---|
| 30) | «Կենտրոն» համալիր մարզադպրոցի շենքը | գ.Վանաձոր, Հերացու փ. շենք 41 | 620 քմ, խուլ պատ, թեքահարթակ չկա |
| 31) | Էդ.Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցի շենքը | գ.Վանաձոր, Վարդանանց փ. շենք 41 | 59 քմ, խուլ պատ, թեքահարթակ |
| 32) | Հովհ. Աբելյանի անվ. դրամատիկական թատրոնի շենքը | գ.Վանաձոր, Թատերական փ. շենք 3ա | 110 քմ, խուլ պատ, թեքահարթակ |
| 33) | ՀՀ ԿԳՆ Հովհ. Թումանյանի անվ. ՎՊՀ-ի գլխ. մասնաշենքի շենքը | գ.Վանաձոր, Տիգրան Մեծի պ. շենք 36 | 92 քմ, խուլ պատ, թեքահարթակ |
| 34) | Ֆ.Նանսենի թիվ 2 մանկապարտեզ շենքը | գ.Վանաձոր, Մյասնիկյան փ. շենք 28 | 80քմ, խուլ պատ, |
| 35) | Վանաձորի «Էվրիկա» դպրոցի շենքը | գ.Վանաձոր, Վարդանանց փ. շենք 100 | 42 քմ, խուլ պատ, թեքահարթակ |
| 36) | Թիվ 1 դպրոցի շենքը | գ.Վանաձոր, Մյասնիկյան փ. | 120քմ, խուլ պատ, |
| 37) | թիվ 6 դպրոցի շենքը | գ.Վանաձոր, Գր.Լուսավորչի փ. շենք 47 | 85 քմ, խուլ պատ, թեքահարթակ |
| 38) | թիվ 3 դպրոցի շենքը | գ.Վանաձոր, Տիգրան Մեծի պ. շենք 35 | 90 քմ, խուլ պատ, թեքահարթակ |
| 39) | «Լոռի» ժամանցի կենտրոնի շենքը | գ.Վանաձոր, Կ.Դեմիրճյան փ. շենք 25/1 | 140 քմ, խուլ պատ, թեքահարթակ չկա |
| 40) | «Բելիսիմո» | գ.Վանաձոր, Բաթումի փ. 9ա | համաձայնեցման |
| 41) | թիվ 4 դպրոցի շենքը | հասցեն՝ գ.Վանաձոր, Տիգրան Մեծի պ. 2 ենք 23 | 70 քմ, խուլ պատ, թեքահարթակ |
| 42) | Շ. Ազնավուրի մշակույթի պալատի շենքը | գ.Վանաձոր, Տիգրան Մեծի պ. շենք 2 | 140 քմ, խուլ պատ, թեքահարթակ |
| 43) | ՀՀ ԿԳՆ Վանաձորի թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարանի շենքը | գ.Վանաձոր, Կ.Դեմիրճյան փ. շենք 23 | 40 քմ, խուլ պատ, թեքահարթակ |
| 44) | ՀՀԿԳՆ Վանաձորի թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարանի ճաշարանի մասնաշենքի շենքը | գ.Վանաձոր, Կ.Դեմիրճյան փ. շենք 23 | 170 քմ, խուլ պատ, թեքահարթակ չկա |
| 45) | թիվ 5 դպրոցի շենքը | գ.Վանաձոր, Տիգրան Մեծի փակ. շենք 2 | 55 քմ, խուլ պատ, թեքահարթակ |
| 46) | թիվ 41 մանկապարտեզի շենքը | գ.Վանաձոր, Շիրակացու փ. շենք 17-1/1 | 80քմ, խուլ պատ, |
| 47) | Հրաչյա Կլեկչյանի անվան մշակույթի տան շենքը | գ.Վանաձոր, Նարեկացու փ. շենք 43 | 75 քմ, խուլ պատ չկա, թեքահարթակ |
| 48) | թիվ 7 դպրոցի նախկին շենքը | գ. Վանաձոր, Թևոսյան փ. շենք 1 | |
| 49) | թիվ 3 մանկապարտեզիշենքը | գ.Վանաձոր, Շիրակի խճ. շենք 64 | 56 քմ, խուլ պատ, թեքահարթակ չկա |
| 50) | թիվ 17 դպրոցի շենքը | գ.Վանաձոր, Բաղրամյան պող. շենք 88 | |
| 51) | Բաղրամյան պողոտայի «Տաղավարը» | գ.Վանաձոր, Բաղրամյան պող. շենք 63 | |
| 52) | թիվ 40 մանկապարտեզի շենքը | գ.Վանաձոր, Տարոն-2 ՔԾՀ-3 | |

| | | | |
|---|---|---|---|
| 53) | թիվ 30 դպրոցի շենքը | ք.Վանաձոր, Տարոն-2 ՔՇՀ-4 Ուկրաինական փ. | |
| 54) | թիվ 30 դպրոցի շենքը | ք.Վանաձոր, Տարոն-2 ՔՇՀ-4 Ուկրաինական փ. | |
| 55) | թիվ 33 մանկապարտեզի շենքը | ք.Վանաձոր, Տաշիրի խճուղի 3 | |
| 56 | *Լոռումարզի«Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնի» շենք ը* | *ք.Վանաձոր, Տարոն) -4 ՍՄԾ. շենք 23* | |
| 57) | թիվ 27 դպրոցի շենքը | ք.Վանաձոր, Տարոն-4 Զեյթունի փ. շենք 3/4 | |
| 58) | թիվ 32 մանկապարտեզի շենքը | ք.Վանաձոր, Տարոն-4 Բ | |

2. Սույն որոշման մասին տեղեկացնել՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանումների, թիվ
23 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող նրին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 22
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 նոյեմբերի 2021 թվականի N 2169

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 25 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, «ԲԱԶՈՒՄ-Բ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՍՐՃԱՐԱՆԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԲԱԶՈՒՄ-Բ» ՍՊԸ-ի տնօրեն Նունե Ռոբերտի Մելիքսեթյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1712403 վկայականը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 08.10.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ-138/21 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 18-րդ կետի ա) և դ) ենթակետերով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Հաստատել Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց թիվ 25 հասցեում գտնվող, «ԲԱԶՈՒՄ-Բ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.100000հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
2. Ճանաչել օրինական «ԲԱԶՈՒՄ-Բ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց թիվ 25 հասցեում գտնվող 0.100000հա մակերեսով *հողամասի վրա ինքնակամ կառուցված, այլ անձանց* իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 75.34քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 59.32քմ) սրճարանը, 7.29քմ ընդհանուր մակերեսով աստիճանները, 15.45քմ ընդհանուր մակերեսով պարիսպները և թվով 20 ինքնակամ ձևափոխումները:
3. «ԲԱԶՈՒՄ-Բ» ՍՊԸ-ի կողմից օրինականացման համար սահմանված վճարները 75.34քմ արտաքին մակերեսով սրճարանի համար 410610 (չորս հարյուր տասը հազար վեց հարյուր տասը) դրամ, 7.29քմ ընդհանուր մակերեսով աստիճանների համար 39740 (երեսունինը հազար յոթ հարյուր քառասուն) դրամ, 15.45քմ ընդհանուր մակերեսով պարիսպների համար 84210 (ութսունչորս հազար երկու հարյուր տասը) դրամ և թվով 20 ինքնակամ ձևափոխումների համար 54500 (հիսունչորս հազար հինգ հարյուր) դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը *կհամարվի ուժը կորցրած:*

4. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 25 սրճարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — ԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. նոյեմբերի 22
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 հոկտեմբերի 2021 թվականի N 2170**

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 32 ՇԵՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ամալյա Կարլենի Շերենցի լիազորված անձ Արմենուհի Կարլենի Ալոյանի 07.10.2021թ. թիվ 14253 դիմումը, 30.03.2021թ. թիվ 26ԱԱ4223656 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 775-20210407-67-5032401), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 32 շենքի հարավային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 19.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 18.1քմ) *մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ*, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 19.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի *աշխատակազմի եկամուտների հավաքագրման*, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

*4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր* ճարտարապետ Ս. Արոյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մետաղական ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 32 շենքի հարավային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, 32/9 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 22
ք.Վանաձոր